

Ազրեսիան որպես հետպատերազմական պաշտպանական մեխանիզմ

Վահան Մելիքսեթյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-467>

Հանգուցային բառեր. *ազրեսիվ վարքագիծ, հետպատերազմական ազրեսիա, ազրեսիվության պաշտպանիչ գործառույթ, ֆիզիկական և հոգեբանական հետտրավմա*

Ներածություն

Պատերազմը հակամարտող կողմերի նպատակների և դիրքորոշումների անողորմ պայքար է, երբեմն էլ՝ ազգերի համար կենաց և մահու հարց, ապրելու և մեռնելու երկընտրանք:

Պատերազմին մասնակցելը դասվում է այն ծայրահեղ իրավիճակների թվին, երբ մարդը (զինծառայողը) անընդհատ գտնվում է ուժեղագույն հոգեհուզական սթրեսի մեջ՝ այն հաղթահարելով կամային ջանքերով: Այս ամենը նրանց վրա շատ թանկ է նստում. ռազմական գործողությունների գրեթե բոլոր մասնակիցների մոտ այս կամ այն չափով դիտվում են ֆիզիկական և հոգեկան վիճակների փոփոխություններ: Հայ ժողովուրդը, որն իր պատմության մեջ ինքնորոշման և սեփական հայրենիքում պետություն ունենալու իրավունքի երաշխավորն է, ապրում է այնպիսի տարածաշրջանում, որտեղ աշխարհաքաղաքական փոփոխությունների արդյունքում, տարբեր ժամանակներում տեղի են ունեցել և դեռ կարող են տեղի ունենալ պատերազմներ, ինչին, օրինակ, ակնատես եղանք 2020 թվականին: Պայքարը բնության մեջ ամենուր առկա գործընթաց է՝ մարտական գործողությունների համար նախատեսված վարքագծի ձև [3, 26-32]: Թեմայի *արդիականությունը* պայմանավորված է հետպատերազմական շրջանում պատերազմին մասնակցած զինծառայողների մոտ նկատվող հոգեբանական-ֆիզիոլոգիական խնդիրների, ազրեսիայի և հոգետրավմայի առաջացմամբ և բացահայտմամբ: Արտակարգ իրավիճակները, այս դեպքում՝ պատերազմը, այս կամ այն կերպ ազդում են մարդու՝ պատերազմի մասնակից զինծառայողի վրա: Այս դեպքում հնարավոր հակազդումների և հույզերի շրջանակը բավականին լայն է:

Շատերը իրենց ամայացած են զգում, իրականությունից կտրված կամ չեն հասկանում, թե ինչ է տեղի ունենում: Կարող են ունենալ վախ, տագնապ կամ ապաթիա: Ումանք դրսևորում են թույլ հակազդումներ, մյուսները՝ ավելի ուժեղ: Այս դեպքում հնարավոր հոգեկան տրավմա ստանալու ուժգնությունը պայմանավորված է նրանով, թե որքանով է այն առնչվում տվյալ մարդուն: Պատերազմի ընթացքում զինծառայողներին ուղեկցում են անորոշությունը,

բարձր տազնապայնությունը, վախը, անգորությունը, կորստի զգացողությունը և այլն: Նման խնդիրներին լուծում չտալու արդյունքում դրանք խորանում են և վերաճում ագրեսիվ դրսևորումների, կախվածությունների, կոնֆլիկտայնության աճի, հասարակությունից հետզհետե օտարման և բազմաթիվ բացասական երևոյթների ի հայտ գալուն: Գոյություն ունեն հասարակության և պետության անվտանգությունն ապահովող կառույցներ, որոնք մասնագիտացված են պետության պաշտպանության հարցում: Դեռևս հնագույն ժամանակներից պետության անվտանգության հիմնական երաշխավորը եղել և մնում է պետության զինված ուժերի համակարգը: Այս կառույցը պատմական տարբեր շրջափուլերում, տարբեր ազգերի և ժողովուրդների մոտ արտահայտվել է յուրօրինակ կառուցվածքով և մարտավարությամբ: Նա է արտաքին վտանգից պաշտպանում հասարակությունը և Հայրենիքը: Գիտության մեջ ընդունված և ապացուցված է այն փաստը, որ հետպատերազմական շրջանում մեծանում է ագրեսիայի, ինքնագրեսիայի և ինքնավնասման միտումը՝ պայմանավորված բազմաթիվ ապրումներով և հույզերով: Եվ որպեսզի այդ հույզերը և ապրումները գտնեն իրենց դրսևորման ուղիները, դրանք ինչ-որ ձևով վերածվում են զայրույթի և ագրեսիայի, արտահայտվում են որպես պաշտպանական մեխանիզմ: Ագրեսիայի հիմնական դրսևորումներն են՝ դուրագրգռությունը, անկայունությունը, անվերահսկելի վարքը, իմպուլսիվությունը, օտարացումը, դժվար հաղորդակցությունը շրջապատի հետ:

Պատերազմական իրավիճակները և ռազմական գործողությունները ցանկացած մարդու համար ամենասուր տրավմատիկ իրողություններն են: Հետպատերազմական շրջանում դրանք խորը բացասական ազդեցություն են ունենում ծառայողների մարտավարական գործունեության և հետագա հոգեբանական առողջության վրա: Պատերազմների ընթացքում մասնակից զինծառայողները կարող են ականատես լինել ընկերների մահվան, կորստի ցավի, կենցաղի, առօրյայի կտրուկ փոփոխությունների, ընտանիքի տառապանքի, կարոտի, և այս բոլոր հոգեբանական տրավմաները կարող են տարատեսակ հետևանքներ ունենալ [1, 21]: Մարդու ագրեսիվ վարքագիծը արձագանքն է կյանքի սպառնալիքների դեմ, այն սպառնալիքների, որոնք վտանգի տակ են դնում մարդ էակի կենսական շահերը:

Գրականության մեջ մեծ շփոթություն է ստեղծում *ագրեսիա* բառի երկիմաստությունը: Այն օգտագործվում է թե՛ հարձակումից ինքնապաշտպանվող անձին, և թե՛ փողի համար սպանող ավազակին բնութագրելու համար: Խորքային հոգեբանական մոտեցումները հաստատում են ագրեսիայի բնագոյային բնույթը: Այս դեպքում ագրեսիան մարդու բնածին ու անբաժանելի սեփականությունն է: Այս մոտեցման ամենասակնառու ներկայացուցիչները հոգեվեր-

լուծական և էթոլոգիական¹ դպրոցների ներկայացուցիչներն են՝ Կարլ Յունգը, Զիգմունդ Ֆրոյդը, Ուիլյամ Մորիսը: Տեսակետ կա, թե հայ հասարակության մեջ ագրեսիայի դիմելու պատրաստակամությունը, հնարավոր է, կապված է այն մարդկանց թվի աճի հետ, որոնք իրենց իրավասու են համարում վրեժխնդիր լինելու իրենց նկատմամբ անարդար գտնված մարդկանցից: Մարդիկ հաճախ հասարակության կողմից ընդունվում են իրենց ագրեսիվ վարքագծի շնորհիվ. այդօրինակ դրսևորումներ կարող են դիտարկվել ներմիջավայրային, բակային խմբերին, էթնիկ փոքրամասնություններին ուղղված ագրեսիաները [6, 240-241]:

Ուսումնասիրության մեջ անդրադարձ է կատարվել ագրեսիայի առաջացման հոգեբանական պատճառներին, առանձնահատկություններին, ագրեսիվության պաշտպանիչ գործառույթներին, ուսումնասիրվել են տրավմայի հետևանքով առաջացած ագրեսիայի դրսևորման առանձնահատկությունները: Ուսումնասիրության *օբյեկտ* են պատերազմներին մասնակցած զինծառայողների հետպատերազմական ագրեսիվության դրսևորման օրինաչափությունները ու առանձնահատկությունները: Ուսումնասիրության *նպատակը* ագրեսիայի առաջացման պատճառների և հաղթահարման ուղիների հետազոտությունն է հետպատերազմական շրջանում: Ուսումնասիրության *խնդիրներն են՝* ա. դիտարկել *հոգետրավմայի* և *ագրեսիայի* առաջացման կապերը, բ. ուսումնասիրել ագրեսիվության պաշտպանիչ գործառույթը և նրա դերը հետպատերազմական շրջանում:

2016 թվականի քառօրյա և 2020 թվականի քառասունչորսօրյա պատերազմներից հետո հասարակության տարբեր շերտերում նկատվում է բևեռայնություն, և դրանով պայմանավորված, նկատելի են մարդկանց ագրեսիվ դրսևորումներ, վրեժխնդրության կոչեր և այլ բացասական հորդորներ: Հետպատերազմական ժամանակահատվածը մշտապես ուղեկցվում է բազմաթիվ բացասական դրսևորումներով՝ հասարակության հոգեկան առողջության անկմամբ, բռնությունների, սպանությունների, ինքնասպանությունների, դրանց փորձերի և մի շարք այլ կախվածությունների թվի աճով:

Հեզելը գրում է, թե պատմության դասերը այն մասին են, թե ժողովուրդներն ու կառավարությունները ոչինչ չեն սովորում և ոչ մի դաս չեն քաղում պատմությունից: Մարդկային ողջամիտ, սակայն տրամաբանության մեջ չտեղավորվող բնույթը ստիպում է պատերազմների մասնակից կողմերին մրցել և պայքարել միմյանց հետ: Այս հակասությունները ունեն բացատրություն և ենթակա են համակարգման: Հետևաբար, անհրաժեշտ է գիտակցել, որ մարդկանց սոցիալական վարքագիծը ոչ միայն թելադրված է բանականությամբ և մշակութային ավանդույթներով, այլև ենթակա է այն օրենքներին,

¹ Էթոլոգիան կենսաբանության ճյուղ է, որը գիտական տեսանկյունից ուսումնասիրում է վարքը և կենդանիների պահվածքը:

որոնք բնորոշում են մարդկանց ֆիլոգենետիկ վարքագիծը: Մարդու աբսուրակտ մտածողությունը նրան օժտել է անհատական փորձի փոխանցման, սոցիալական, քաղաքական, մշակութային և գարգացումների հնարավորություններով, սակայն դրանք իրենց հետ բերել են կտրուկ փոփոխություններ, որոնք որոշակի կենսապայմաններում փլուզում են մարդու բնագոյները և հարմարվողական կարողությունները, և այդ հանգամանքը հաճախ արտահայտվում է նաև սոցիումից փախուստով [3, 200]:

Փախուստը սոցիումից որպես ինքնապաշտպանական մեխանիզմ

Եվ եթե արձանագրենք, որ մարդու ուղեղում առկա հատուկ նյարդային մեխանիզմները ակտիվացնում են նրա ագրեսիվ վարքագիծը կամ փախուստը՝ որպես անհատի կամ տեսակի կյանքին սպառնացող վտանգի արձագանք, ապա ենթադրելի է, որ այս ագրեսիվությունը կենսաբանորեն հարմարվողական գործառույթ ունի և ծառայում է կյանքին [3, 80]: Կոիվ մղելու կամ փախուստի մասին պատկերացումները և տվյալները, որպես պաշտպանական հակազդումներ, անսպասելի լույս են սփռում ագրեսիայի բնագոյային դրսևորումների և դրանց տեսական հիմնավորումների վրա: Պարզվում է, որ փախուստի ռեֆլեքսը (նեյրոֆիզիոլոգիայի և վարքագծի առումով) հավասարաչափ կարևոր դերակատարություն ունի նաև կենդանիների վարքագծի մեջ, թեև ուղեղի ֆիզիոլոգիայի մակարդակում երկու ազդակներն էլ ունեն ներգրավվածության ճիշտ նույն աստիճանը, և հիմք չկա ենթադրելու, թե ագրեսիվությունը ավելի բնական հակազդում է, քան փախուստը: Ֆիզիոլոգիական տեսանկյունից այն ունի նույն հիմնավորումը, ինչ *անվերահսկելի ագրեսիվություն* հասկացությունը: Կենսաբանական տեսանկյունից փախուստը նույնիսկ առավել հուսալի է ինքնապաշտպանության համար, քան պայքարը:

Երբիս Ֆրոմը նշում է, թե սույնը լավ հայտնի է քաղաքական գործիչներին և ռազմական ոլորտի ներկայացուցիչներին: Նրանք գիտեն, որ մարդը իր բնույթով հակված չէ հերոսության: Նրանք փորձով գիտեն, թե որքան ջանք է պահանջվում մարդուն մարտի դաշտ ուղարկելու և փախուստից հետ պահելու համար: Այս առումով ուշագրավ է հարցը, *թե բնագոյներից ո՞րն է ավելի շատ դրսևորվել մարդկության պատմության մեջ՝ փախուստի՞ր բնագոյը, թե՞ կոպի բնագոյը* [4]: Ըստ Ֆրոմի՝ այս հարցը ենթադրում է «Պատմությունը որոշվում է ոչ այնքան ագրեսիվ բնագոյներով, որքան մարդու մեջ փախուստի բնագոյը ճնշելու փորձով» պատասխանը [4]: Այդ նպատակին են ծառայում սոցիալական ինստիտուտների մեծ մասը և գաղափարական ողջ զինանոցը: Միայն մահվան վախի ազդեցությամբ է հնարավոր զինվորների մեջ սերմանել հավատ *առաջնորդի իմաստություն* և *պատիվ* հասկացությունների նկատմամբ:

Փակվածության պատրանքը որպես հնարավոր պաշտպանական մեխանիզմ

Պաշտպանական մարտի հոգեբանական առանձնահատկությունները առավել խոր ուսումնասիրված են ռուս հոգեբան Վ. Ն. Պոլյանսկու կողմից: Նա կարծում է, թե պաշտպանության ընթացքում մարտիկների մոտ կարող է առաջանալ այնպիսի արդյունավետ զգացում, ինչպիսին է *փակվածության պատրանքը*: Պոլյանսկին գրում է. «Տեղանքի բոլոր բաղկացուցիչները՝ գյուղեր, անտառներ, կառույցներ, բլուրներ և այլն, մագնիսի պես դեպի իրենց են ձգում զինվորներին: Մահացու վտանգը ծնում է *փակվածության պատրանք*, նրանք ձգտում են շարժվել դեպի այն բոլոր փակ տարածությունները, որոնք գտնվում են հակառակորդի տեսադաշտից դուրս [2, 139-140]: Բազմաթիվ ուսումնասիրություններ փաստում են, որ պաշտպանական գործողությունները անձնակազմի կողմից գնահատվում են որպես մարտական նախաձեռնության կորստի պահ, հակառակորդի մարտական առավելություն: Այդ դեպքում հակառակորդի հնարավորությունները հաճախ գերազնահատվում են: Պաշտպանվող զորքերի վրա հակառակորդի կողմից ակտիվ և հմուտ հոգեբանական ներգործությունը կարող է ստեղծել նաև *անխոցելիության* և *անպարտելիության* պատրանք: Հուզական առումով պաշտպանական մարտական գործողությունները առանձնանում են նրանով, որ դրանց ձգձգվելուն զուգընթաց աճում է պաշտպանվող զորքերի անվստահությունը իրենց մարտական հնարավորությունների հանդեպ, զարգանում են սեփական անկարողության և անելանելիության զգացողությունները: Դրանք ուղեկցվում են հրամանատարության հեղինակության անկմամբ, ինչը առավել է խորացնում մարտական իրավիճակի բարեփոխման հանդեպ անվստահությունը, խթանում է ընդհանուր ճնշվածության, գրգռվածության և հոռետեսության զարգացումը:

Պաշտպանության ընթացքում պայմաններ են ստեղծվում հակառակորդի հոգեբանական գործողությունների արդյունավետության բարձրացման համար: Դա հատկապես բնորոշ է այն դեպքում, երբ պաշտպանությունը կազմակերպվում է ստիպված, հապշտապ, հակառակորդի կողմից ուժեղ կրակի ազդեցությամբ և հոգեբանական ճնշումով: Պատերազմների և զինված բախումների փորձը վկայում է, որ մարտիկները նախընտրում են հարձակումը նաև այն բանի համար, որ այս դեպքում հանկարծակիության հոգեբանական էֆեկտի կիրառումը առավել հնարավոր է, ինչը որոշ տվյալներով դիտարկվում է որպես մարտերի և օպերացիաների մեծամասնության հաղթանակի գրավական: Ռազմական մասնագետների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջին հաշվով, հարձակվող զորքերը դադարեցնում են հարձակումը միայն այն ժամանակ, երբ նրանց կորուստները կրկնակի գերազանցում են պաշտպանվողների կորուստները նույնիսկ այն դեպքում, երբ պաշտպանվողները պարտված են զգում իրենց, նրանց կորուստները կազմում են հարձակվողների կորուստների քիչ տոկոսը [2, 138]:

Հարձակումը որպես պաշտպանության կամային դրսևորում

Հարձակումը զինձառայողների կողմից առավել նախընտրելի մարտական գործողության տեսակ է: Հարձակվողի դերում լինելու առավելությունը հոգեբանորեն բացատրվում է նրանով, որ այն զուգորդվում է ձեռնարկող կողմի մարտական գործողություններին և դրսևորվում որպես կամային և հոգևոր առավելություն: Այս համոզմունքը վաղուց կար: Զինվորական իմաստությունը ձևակերպել է պատերազմի նշանավոր օրենքը՝ *լավագույն պաշտպանությունը հարձակումն է*՝ դրանով իսկ հստակեցնելով այն որպես հոգեբանորեն առավել նախընտրելի մարտական գործողությունների տեսակ:

Հարձակման ընթացքում ի հայտ են գալիս մարտիկների հոգեվիճակի դինամիկան արտացոլող դրական հուզական դրսևորումներ՝ առաջացնելով մարտական գրգիռ, մոլեգնություն, հոգեկան վերելք: Այն մարտիկի մեջ ճնշում է վախը, երկմտանքը, մարտական իրադրության հոգեխոցիչ գործոններից առաջացած սուր հակագրումները, մոբիլիզացնում է մարտիկների բոլոր հնարավորությունները, կամքը, ուժեղացնում է թշնամու նկատմամբ ասելությունը:

Վարքային ակտիվության առումով հարձակման էներգիան և դինամիկան նպաստում են զինձառայողների համարձակությանը, հերոսությանը և մարտական նախաձեռնություններին: Դրան առավելապես նպաստում են հոգեկան վարակի և ընդօրինակման գործընթացները: Յուրաքանչյուր ավերիչ պատերազմից հետո մարդկությունը ինքն իրեն երդվում է, որ այն երբեք այլևս չի կրկնվի, սակայն զինված հակամարտությունները և բախումները մնում են որպես իրականության մաս: Լորենցը գրում է, թե ագրեսիվությունը բնորոշ է մարդու էությանը, և ի տարբերություն կենդանիների, որոնք ունեն ճանկեր կամ ժանիքներ, մարդիկ սկզբում չունեն իրենց ուժը ցույց տալու ակնհայտ միջոցներ: Մարդը ստիպված է անընդմեջ հակամարտությունների մեջ լինել հակառակորդների հետ, որպեսզի վաստակի առաջինը լինելու իրավունքը: Ագրեսիան՝ որպես կենսաբանական մեխանիզմ, ըստ Լորենցի, հասարակական կարգի հիմքում է: Մակայն Լորենցի տեսակետը խոցելի է այնքանով, որ այսօր առկա է մարդու վարքագիծը վերահսկող երկրորդ մեխանիզմը՝ *փոխզոնումների* որոնումը: Այն նույնքան կարևոր է մարդկանց հետ փոխհարաբերություններում, որքան ագրեսիան [7, 1-3, 14]:

Ագրեսիվ վարքագիծը որոշ դեպքերում կարող է արտահայտվել նաև որպես պաշտպանիչ մեխանիզմների աշխատանքի դրսևորում և ծառայել որպես հոգեբանական պաշտպանության ուժեղացման ազդանշան: Ագրեսիվ վարքագիծը ինքնին կարող է պաշտպանական լինել, իսկ հոգեբանական պաշտպանության մեխանիզմները կարող են ակտիվացվել ագրեսիվ վարքագիծը արդարացնելու նպատակով [8]:

Գոյություն ունեն նաև հոգեկան կյանքի և միջանձնային փոխհարաբերությունների այլ, առավել ընդհանուր օրինաչափություններ, որոնց դեպքում

մարդու զգացմունքներն ու դիրքորոշումները կարող են անցնել մեկ օբյեկտից մյուսին, մեկ անձից՝ մյուս անձին: Մարդու մեջ դրական կամ բացասական հույզերի և էներգիաների կուտակման արդյունքում ցանկացած փոքր առիթով դրանք կարող են անհարկի դրսևորվել՝ զարմանք պատճառելով վարքագծով: Հաճախ հույզերի և զգացմունքների թիրախներ են նաև պատահական մարդիկ կամ օբյեկտները: Տեղափոխման մեխանիզմը խորհրդանշական գուգորդությունների օգնությամբ կարող է շատ բարդ ու սոցիալական չափանիշներից շեղումների (դեվիանտային) ձև ստանալ: Այսպիսի իրացվող հույզերը լրացուցիչ պաշտպանական միջոցներ են, որոնք մարդուն թույլ չեն տալիս որոշակի իրադրություններում դրսևորել ագրեսիվ գործողություններ [5]:

Իրավիճակը էլ ավելի կարող է սրվել հետպատերազմական շրջանում, քանի որ ոչ բարենպաստ պայմաններում հակազդելու ոչ բարենպաստ եղանակները կարող են տեղափոխվել կյանքի հետագա փուլեր: Պատերազմի ընթացքում հոգեկան տրավմատիզացիան արտահայտվում է մի քանի փուլերով, թեև սկզբում ի հայտ են գալիս միայն տագնապային, վախի կամ հուզական արձագանքի ազդակները, ուստի մարդկանց հետ տարվող աշխատանքները պետք է ուղղված լինեն նրանց հոգեկանի կայունացմանը [9]:

Հոգետրավմաները իրենց ազդեցությունը կարող են ունենալ անհատի ամբողջ կյանքի ընթացքում, իսկ կուտակված էներգիան սպառելու համար շատ հաճախ օգտագործվում են ագրեսիվ եղանակներ: Տրավմատիկ իրավիճակները հիմնականում ձևավորվում են հույզերի կուտակման և դրանք չիրացնելու հետևանքով: Ֆիզիկական վիրավորում ստացած զինծառայողների հոգեվիճակը առավել բարդ է նրանով, որ նրանք ունեն նաև ֆիզիկական վնասվածքներ և կորուստներ: Այս պարագայում, իհարկե, կարևորվում է նաև հոգեբանի աշխատանքը, որը երկկողմանի է, քանի որ այն տարվում է մարդու առողջական վիճակի (արդեն փոփոխությունների ենթարկված մարմնի ընկալման ուղղությամբ) և պատերազմի տրավմատիկ փորձառությանը զուգընթաց:

Հոգեբանական տրավմատիզացիայի պարագայում դիտարկվում են ավելի պարզորոշ հոգեծին ախտանիշներ՝ սուր տագնապային վիճակներ, դեպրեսիվ համախտանիշ, անվերահսկելի ագրեսիայի և զայրույթի դրսևորումներ [10]:

Եզրակացություն

Ագրեսիվ վարքագիծը կարող է արտահայտվել իբրև պաշտպանական մեխանիզմ և ծառայել որպես հոգեբանական պաշտպանության ուժեղացման ազդանշան: Հետպատերազմական շրջանում պատերազմի մասնակցած զինծառայողների մոտ առաջացնում են ագրեսիայի միտումներ: Դրանք պայմանավորված են բազմաթիվ չվերապրած հույզերով, առաջացնում են ոչ ընդունելի մտքեր կամ ցանկություններ, որոնք տեղափոխվում են ենթագիտակցություն: Պատերազմ վերապրած զինծառայողների մոտ առկա տրավ-

մատիկ ապրումները սրվում են հույզերի արտահայտման հնարավորություն չստանալու և զսպված հույզերը կուտակելու հետևանքով: Այս չվերապրած հույզերը հիասթափություն, հուսալքություն, տխրություն, կորստի ցավ, անարդարության, անօգնականության զգացում, իրենց արտահայտությունը գտնում են ագրեսիվ դրսևորումներով: Քառօրյա (2016 թ.) և քառսունչորսօրյա (2020 թ.) պատերազմները վերապրած զինծառայողների մոտ առկա ագրեսիվությունը անձի հոգեբանական պաշտպանության մեխանիզմ է, որը ուղեկցվում է բարձր կոնֆլիկտայնությամբ, ոչ կառուցողական մտածողությամբ, անարդարության զգացումով, ցածր սթրեսակայունությամբ և տրավմատիկ ապրումներով:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-467>

Գրականություն

1. Խանամիրյան Ի. Ռ., Գևորգյան Դ. Է., Երեխան և հոգետրավման, Երևան, ԵՊՀ հրատ., 2017, 70 էջ:
2. «Ռազմական հոգեբանության հիմնախնդիրները» հանրապետական գիտաժողով (զեկուցումներ և հոդվածներ), Երևան, 2013, 354 էջ:
3. Лоренц К., Агрессия или так называемое зло. Перевод. А. Федоров, наследники, 2018, М., Изд. АСТ, 416 с.
4. Фромм Э., Анатомия человеческой деструктивности. Пер. с англ. Э. М. Телятникова, Т. В. Панфилова, М., Изд. АСТ, 2004, 635 с.
5. Dollard J., Miller N., Theory of Personality, Unit 3, 2015, pp. 34-44.//<https://fdocuments.in/document/dollard-and-miller-theory-of-personality.html>.
6. Miller N., Dollard J., Social Learning and Limitation, Yale University Press, New Haven & London, pp. 240-241.
7. Fry. D., Beyond War: The human potential for peace. New York: Oxford University Press, 2007, 104 p.
8. <http://www.vashpsixolog.ru/pedagogically-difficult-children/53-aggressive-children/>.
9. <https://mediamax.am/am/news/society/43550>.
10. <https://daily.afisha.ru/relationship/10430-gid-po-psihotravmam-kak-nepriyatnye-sobytiya-iz-detstva-portyat-vzroslyu-zhizn/>.

Резюме

Ключевые слова: агрессивное поведение, поствоенная агрессия, агрессивность, защитная функция, физические и психологические посттравмы

В исследовании мы обращаемся к психологическим причинам и особенностям возникновения поствоенной агрессии у военнослужащих, принимавших участие в военных действиях, а также к защитным функциям агрессивности. Помимо этого, нами была изучена специфика проявления агрессии, возникшая в результате травмы. В поствоенный период увеличивается тенденция к агрессии и самоагрессии (умышленное нанесение увечий самому себе), так как наблюдаются многочисленные заново переживаемые эмоции и чувства. При проявлении этих чувств они трансформируются в гнев и агрессию и выступают в качестве защитного механизма. Участие в войне оказывает сильное воздействие на сознание человека, подвергая его серьезным качественным изменениям. В основе личностных трансформаций, по мнению большинства исследователей, лежат изменения смыслового ядра личности, развивающиеся после экстремальной ситуации.

После возвращения к мирной жизни комбатанты переживают стрессы, связанные с трудностями приспособления к новым условиям, сталкиваются с непониманием, осуждением, сложностями в общении и профессиональном самоопределении. На первичный стресс, полученный во время войны, накладывается вторичный, возникший после возвращения домой, что становится внутренней основой психологической и социальной дезадаптации человека в обществе.

Боевой травматический стресс и его последствия являются одним из главных внутренних барьеров на пути социальной адаптации комбатантов в гражданском обществе.

Психологические травмы могут влиять на личность человека на всем протяжении жизни, а для освобождения от накопленной энергии часто применяются агрессивные методы. Травматические переживания у военнослужащих, прошедших войну, обостряются в результате накопления подавленных эмоций и отсутствия возможности для проявления чувств. Заново переживаемые эмоции – разочарование, отчаяние, грусть, боль утрат, несправедливость, ощущение беспомощности – находят свое выражение в агрессивном поведении.

Aggression as a Post-War Defense Mechanism

Vahan Meliksetyan

Summary

Key words: *aggressive behavior, post-war aggression, protective function of aggression, physical and psychological post-traumas*

The study addresses the psychological causes of the post-war aggression of war participant servicemen, their peculiarities, and the protective function of aggression. The specificity of the manifestation of aggression cause by trauma was studied as well. In the post-war period, the tendency of self-mutilation during aggression and self-aggression increases, because there are many not outlived emotions. For these emotions to find their way of manifestation, they somehow turn into anger and aggression and function as a defense mechanism. Participation in a war has a strong impact on a person's consciousness, subjecting him to serious qualitative changes. At the heart of personal transformations, according to most researchers, are changes in the semantic core of the personality that develop after an extreme situation.

After returning to civilian life, combatants experience stress associated with difficulties in adapting to new conditions: they face misunderstanding, condemnation, difficulties in communication and professional self-determination. The primary stress received during the war is superimposed by the secondary one that arose after returning home, which becomes the internal basis of the psychological and social maladjustment of a person in society.

Combat traumatic stress and its consequences are one of the main internal barriers to the social adaptation of combatants in civil society.

Psychological trauma can have an impact throughout an individual's whole life, and aggression is often used to get rid of the accumulated energy. The traumatic experiences of war survivor servicemen are exacerbated by not being able to express their emotions and accumulating suppressed emotions. Not outlived emotions, i.e. disappointment, discouragement, sadness, pain of loss, feeling of injustice and helplessness, find their expression in aggressive manifestations.

Ներկայացվել է 15.04.2023 թ.

Գրախոսվել է 24.04.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.